ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ

ՆՈՒՆԵ ԴԱՎԹՅԱՆ
«Կրթական ծրագրերի կենտրոն»
ՇԻԳ, նախադպրոցական միկրոծրագրերի
և ավագ դպրոցների ենթածրագրերի ղեկավար

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հանրակրթության ոլորտի զարգացման ներկա փուլում հանրակրթական դպրոցների վարկանիշավորման իրականացման անհրաժեշտությունը դարձել է կարևոր խնդիր՝ պայմանավորված դպրոցների գործունեությունն ըստ իրական արդյունքների գնահատման անհրաժեշտության: Հայաստանի դպրոցների վարկանիշավորման գործընթացը ներդնելու և իրականացնելու համար շատ կարևոր է այս ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրումը:

Կրթական հաստատությունների վարկանիշավորման պատմությունը սկսվում է 1925 թվականից՝ բարձրագույն կրթական հաստատությունների (մասնավորապես համալսարանների) վարկանիշավորմամբ, երբ ամերիկացի պրոֆեսոր Ռայմոնդ Հյուգսը ԱՄՆ համալսարանների բակալավրական ծրագրերի համար ներդրեց վարկանիշավորման հիմնական սկզբունքները: Հյուգսի նախաձեռնությունից միայն 60 տարի անց բուհերի վարկանիշավորման գործընթացն ԱՄՆ–ում նոր թափ ստացավ և սկսվեց տարածվել այլ երկրներում: Բուհերի վարկանիշավորման փորձն աստիճանաբար տեղափոխվեց նաև հանրակրթական ոլորտ: Դպրոցների վարկանիշավորման գործընթացները համեմատաբար ավելի զարգացած են ԱՄՆ–ում, Միացյալ Թագավորությունում, Իռլանդիայում, Ավստրալիայում, Սինգապուրում և մի քանի այլ երկրներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

«ԱՄՆ լավագույն ավագ դպրոցները»՝ ԱՄՆ–ի ավագ դպրոցների վարկանիշավորումը

ԱՄՆ–ում դպրոցների վարկանիշավորման նպատակն է տալ հստակ և անկողմնակալ տեղեկատվություն դպրոցների գործունեության և կրթության որակի մասին: Մասնավորապես, վարկանիշավորման խնդիրն է տեղեկացնել շահառուներին, թե ինչպիսի կրթություն է ապահովում դպրոցի տարբեր պահանջներ ունեցող սովորողների համար: Վարկանիշավորումը նաև օգնում է ծնողներին որոշումներ կայացնել իրենց երեխայի դպրոցի ընտրության հարցում: ԱՄՆ–ում տարբեր կրթական մակարդակների դպրոցները (տարրական, հիմնական և ավագ) վարկանիշավորվում են առանձին:

Ստորև նկարագրվում է ԱՄՆ–ի պետական ավագ դպրոցների վարկանիշավորման մեթոդաբանությունը, որի արդյունքում հրապարակվում են լավագույն ավագ դպրոցների ցանկերը:

Համայնքային /մունիցիպալ/ ավագ դպրոցների վարկանիշավորումն ԱՄՆ–ում իրականացվում է «ԱՄՆ նորություններ և համաշխարհային զեկույց» (“U.S. News & World Report”) կազմակերպության կողմից: 2011 թվականին վարկանիշավորման նպատակով վերլուծվել է 49 նահանգի եւ Կոլումբիայի շրջանի 21776 ավագ դպրոցների տվյալները:

Մասնավոր դպրոցները չեն ընդգրկվում դպրոցների վարկանիշավորման գործընթացում, քանի որ այդ դպրոցների սովորողները շատ դեպքերում չեն հանձնում ԱՄՆ մունիցիպալ ավագ դպրոցների համար պարտադիր թեստերը:

2011 թվականին ավագ դպրոցների վարկանիշավորումն իրականացնելիս վերոնշյալ կազմակերպությունը դպրոցների մասին հիմնական տեղեկատվությունը ստացել է հետևյալ տեղեկատվական աղբյուրներից.

- *Տվյալների միացյալ համակարգը* (The Common Core of Data) – ԱՄՆ կրթության դեպարտամենտի կայքն է, որը պարունակում է տվյալներ ընդգրկվածության, սովորողների ազգային պատկանելության, անվճար սնունդ ստացողների մասին և այլն:
- *Ավագ դպրոցների Խորհրդի (College Board) տվյալների բազան,* որը պարունակում է ամբողջական տվյալներ հետագա ուսման նպատակով անցկացվող «Առաջնահերթ տեղաբաշխում» (AS՝ AP–Advanced Placement) քննությունների արդյունքների վերաբերյալ:
- *«Միջազգային բակալավրիատ»* (ՄԲ՝ IB–International Baccalaureate) *թեստերի արդյունքների տվյալների բազան*:
- *Ավագ դպրոցների հաշվետվությունները «հմտություններ/գիտելիքներ» թեստերի արդյունքների վերաբերյալ,* որոնք հավաքագրվում են առանձին նահանգների պաշտոնական աղբյուրներից:

Վարկանիշավորման մեթոդաբանությունը մշակվել է՝ ելնելով հետևյալ սկզբունքից. լավագույն են հանդիսանում այն դպրոցները, որոնք բավարարում են բոլոր սովորողների ուսումնական պահանջները և սովորողների կրթական ձեռքբերումներն ակնհայտ են: Մասնավորապես, համաձայն այս մեթոդաբանության, լավագույն դպրոցներ են համարվում այն դպրոցները, որոնք բավարարում են հետևյալ պահանջներին.

1) Դպրոցի բոլոր սովորողները 2 հիմնական՝ անգլերեն լեզու և մաթեմատիկա առարկաներից անցկացվող քննություններում ցուցաբերում են ակնկալվող վիճագրական արդյունքի միջինից բարձր արդյունք: Հաշվի է առնվում նաև սովորողների սոցիալական կարգավիճակը:

2) Դպրոցում ընդգրկված իսպանախոս, սևամորթ, սոցիալական անապահով և բնակչության խոցելի այլ խմբերի սովորողները քննություններում ցուցաբերում են նույն խմբերի սովորողների համար երկրի միջին գնահատականներից բարձր արդյունք:

3) Դպրոցներն ապահովում են սովորողների հետագա կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ըստ այդմ «ԱՄՆ նորություններ և համաշխարհային զեկույց»–ի մեթոդաբանության վարկանիշավորումն իրականացվում է հետևյալ 3 քայլով.

<u>Քայլ 1.</u> Հաշվարկվում է *դպրոցի գործունեության ցուցիչը* (ինդեքս) յուրաքանչյուր ավագ դպրոցի համար, որը հենված է քննություններում սովորողների առաջադիմության, մասնավորապես՝ անգլերեն լեզվից եւ մաթեմատիկայից թեստերի արդյունքների վրա: Այս ցուցիչի հաշվարկման ժամանակ դպրոցները կարող են ստանալ լրացուցիչ միավոր՝ ելնելով դպրոցում սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների ընդգրկվածության տոկոսից: Այդ միավորը հաշվարկվում է անվճար կամ արտոնյալ գներով սնունդ ստացողների թվով, որոնց մասին տվյալները տեղադրված

են ԱՄՆ կրթության ֆեդերալ դեպարտամենտի կայքում: Քայլ 1–ում հաշվարկվում է նաև դպրոցի գործունեության *ռիսկի ցուցիչը:* Այն յուրաքանչյուր ավագ դպրոցի գործունեության արդյունքի կանխատեսելի արդյունքն է՝ դպրոցի սովորողների կանխատեսվող առաջադիմության տարբերությունը փաստացի առաջադիմությունից: Ռիսկի ցուցիչը հաշվարկվում է անգլերեն լեզվից և մաթեմատիկայից պետական քննությունների արդյունքների հիման վրա, կրկին հաշվի առնելով սոցիալապես անապահով խմբի սովորողների տոկոսը:

Այն ավագ դպրոցները, որոնց ռիսկի ցուցչի արժեքը բարձր է վիճակագրորեն ակնկալվող արժեքից, դիտարկվում են որպես ակնկալիքները գերազանցող դպրոցներ և հակառակը:

Քայլ 2. Որոշվում են այն ավագ դպրոցները, որոնց ցածր առաջադիմությամբ սովորողները ցուցադրել են երկրի միջինից բարձր առաջադիմություն: Մասնավորապես, վերլուծվում են անգլերեն լեզու եւ մաթեմատիկա առարկաներից պետական քննությունների ժամանակ դպրոցի բոլոր խոցելի խմբերի սովորողների միջին գնահատականի տարբերությունը երկրի միջին գնահատականի նկատմամբ՝ նույն խմբերի համար: Արդյունքում հաշվարկվում է «*անգլերեն լեզվի և մաթեմատիկայի հմտությունների ցուցիչը*» դպրոցի համար: Եթե այն դրական է, ապա դպրոցի խոցելի խմբերի սովորողների առաջադիմությունը բարձր է երկրի միջինից այդ խմբերի նկատմամբ:

Քայլ 3. Հաշվարկվում են դպրոցի արդյունքները միջնակարգ կրթության ավարտական և բուհի ընդունելության քննություններում՝ «Առաջնահերթ տեղաբաշխում» (ԱՏ) և «Միջազգային բակալավրիատ» (ՄԲ): Մասնավորապես հաշվարկվում է ԱՏ և ՄԲ քննություններին դպրոցի սովորողների մասնակցության տոկոսը:

Այնուհետև դիտարկվում է ԱՏ և ՄԲ քննություններին սովորողների մասնակցության տոկոսը որակի տեսանկյունից, ըստ այդմ հաշվարկվում է նշված քննություններին դպրոցից մասնակցած այն սովորողների թիվը, ովքեր ստացել են 3–ից բարձր միավոր ԱՏ կամ 4 և ավելի բարձր միավոր՝ ՄԲ քննությունների արդյունքում: Այնուհետև այն բաժանվում է դպրոցի 12–րդ դասարանցիների ընդհանուր թվին: ԱՏ և ՄԲ քննություններին դպրոցի սովորողների ընդհանուր մասնակցության որակի տեսանկյունից *հաշվարկվում է բուհին/քոլեջին պատրաստվածության ցուցիչը (CRI):*

Այսպիսով այս ցուցիչը չափում է, թե որքանով են յուրացրել սովորողները բուհի/քոլեջի մակարդակի նյութերը և պատրաստ են ուսումը շարունակել բուհերում:

Այս երեք քայլերի արդյունքում որոշվում են երկրի լավագույն մունիցիպալ ավագ դպրոցները, որոնք բաժանվում են 3 խմբի՝ ոսկե, արծաթե և բրոնզե մեդալակիր դպրոցների: 2011 թվականի վարկանիշավորման արդյունքում ոսկե մեդալակիր դպրոցներն են համարվել 21776 պետական ավագ դպրոցներից լավագույն 500–ը (սանդղակում առաջին 500 դպրոցները): 501–ից մինչև 2008 տեղերը զբաղեցրած դպրոցները համարվել են արծաթե մեդալակիրներ, իսկ 2008–ից մինչև 4877 տեղերը զբաղեցրած դպրոցները համարվել են բրոնզե մեդալակիր: Բրոզե մեդալակիր դպրոցների ցանկերը հրապարակվում են այբբենական կարգով:

ԱՄՆ վարկանիշավորման մեթոդաբանությունը սխեմատիկ պատկերված է նկ. 1–ում:



Նկ. 1

Ամփոփելով նշենք, որ ոսկե կամ արծաթե մեդալի արժանանալու և վարկանիշավորման ցուցակում ընդգրկվելու համար, յուրաքանչյուր ավագ դպրոց պետք է անցնի նկարագրված մեթոդաբանությունով նախատեսված 1 ու 2 քայլերը և գերազանցի բուհին/քոլեջին պատրաստվածության CRI–ի ցուցչի միջին արժեքը: Հարկ է նշել նան, որ «մեդալակիր» դպրոցները չեն ստանում որևէ դրամական պարգև: ԱՄՆ լավագույն պետական ավագ դպրոցների ընտրության սխեման տրված է նկ 2–ում:



Նկ. 2

Կանադա

Կանադայում պետական և ոչ պետական դպրոցների վարկանիշավորում իրականացվում է 1998 թվականից: Այդ գործընթացով զբաղվում է իր կարգավիճակով անկախ Ֆրեզերի գիտահետազոտական ինստիտուտը, որը մասնաճյուղեր ունի Վանկուվերում, Կալգարիում ու Տորոնտոյում: Յուրաքանչյուր տարի իրականացվում է Կանադայի միայն մեկ վարչական տարածաշրջանի դպրոցների վարկանիշավորում, որի համար Ֆրեզերի ինստիտուտի վերլուծաբաններն օգտագործում են հետևյալ 7 ցուցանիշները.

- ✓ Ավարտական քննություններից շրջանավարտների ստացած գնահատականները.
- ✓ Քննությունները չհաձնած սովորողների տոկոսը.
- ✓ Սովորողների ընթացիկ գնահատականների միջինի և ավարտական քննությունների գնահատականների միջինի տարբերությունը.
- ✓ Անգլերեն լեզվի պետական ավարտական քննությունից տղաների և աղջիկների ստացած գնահատականների տարբերությունը.

- ✓ Մաթեմատիկայի պետական ավարտական քննությունից տղաների և աղջիկների ստացած գնահատականների տարբերությունը.
- ✓ Դպրոցի սովորողների կողմից հանձնած քննությունների ընդհանուր թիվը.
- ✓ Ավարտական վկայական ստացած այն սովորողների տոկոսը, ովքեր ամբողջ միջնակարգ կրթությունը ստացել են տվյալ դպրոցում.
- ✓ Բարձր դասարաններում երկտարեցիների թիվը:

Վարկանիշավորման մեթոդաբանությունը բավականին պարզ է: Յուրաքանչյուր ցուցանիշով դպրոցը կարող է հավաքել առավելագույնը 10 միավոր: Վերջնական ցանկում ներառվում են միայն առավելագույն միավորներ ստացած դպրոցները:

Կանադայում պետական ու ոչ պետական դպրոցները հավասարապես մասնակցում են վարկանիշավորման գործընթացին և ներկայացվում են մի միասնական ցանկում: Վարկանիշավորման արդյունքներն օգտագործում են հիմնականում հանրությանը տեղեկությամբ ապահովելու և ծնողներին դպրոց ընտրելու հնարավորության տալու նպատակով:

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում վարկանիշավորման գործընթացում ամեն տարի ընդգրկվում են ավելի քան 3300 հանրակրթական դպրոցներ: Վարկանիշավորման արդյունքները հրապարակվում են յուրաքանչյուր տարի "The Daily Telegraph"[1] օրաթերթի կողմից ամենատարբեր խմբավորումներով. «Տղաների լավագույն 20 դպրոցներ», «Աղջիկների լավագույն 40 դպրոցներ», «Լավագույն 100 ուսումնական հաստատություններ» և այլն:

Վարկանիշավորումը կատարվում է կրթության չորրորդ և հինգերորդ (KS4 և KS5) մակարդակների ավարտական քննությունների՝ «Միջնակարգ կրթության ընդհանուր վկայական» (ՄԿԸՎ–General Certificate of Seconary Education (GCSE)), ինչպես նաև բուհի ընդունելության քննությունների՝ «Ա–մակարդակի քննություն» (Advanced Level General Certificate of Education (A–Level)) ու «Միջազգային բակալավրիատ» (ՄԲ՝ International Baccalaureate (IB)), արդյունքների հիման վրա:

Յուրաքանչյուր դպրոց վարկանիշավորվում է ըստ այն սովորողների տոկոսների, ովքեր հանձնել են ՄԿԸՎ–ի առնվազն հինգ A–ից C մակարդակի քննություն (A to C level)՝ անգլերեն լեզվից և մաթեմատիկայից:

Դպրոցների վարկանիշավորման ժամանակ հաշվի է առնվում այն աշակերտների թիվը, ովքեր հանձնել են պետական «Անգլիական բակալավրիատ» նոր քննությունը: Հաշվարկվում են այն աշակերտները, ովքեր ստանում են A–ից C գնահատական (բավարարից գերազանց գնահատական) անգլերեն լեզվից, մաթեմատիկայից, երկու բնագիտական առարկաներրից և մեկ հումանիտար առարկայից՝ օտար լեզվից, պատմությունից կամ աշխարհագրությունից: Բացի այդ, վարկանիշավորման ընթացքում դպրոցները ստանում են հավելյալ միավորներ, որոնք հաշվարկվում են համեմատելով 11 տարեկան երեխաների թեստերի (KS2) և 16 տարեկան երեխաների (KS4) անգլերեն լեզու և մաթեմատիկա առարկաներից ՄԿԸՎ թեստերի արդյունքները:

Գնահատվում է նաև դպրոցում մեկ աշակերտի վրա կատարվող ծախսերը:

Այսպիսով վարկանիշավորումը կատարվում է հետևյալ չափանիշներով.

[1] "The Daily Telegraph"օրաթերթի միջին տպաքանակը կազմում է 600 000 օրինակ:

- ✓ Աշակերտների տոկոսը, ովքեր մասնակցել են «Միջնակարգ կրթության ընդհանուր վկայականի» համար անցկացվող քննությանը (GCSEs – KS4).
- ✓ Աշակերտների տոկոսը, ովքեր դրսևորել են բավարար առաջընթաց դպրոցի 2–րդ (KS2) և 4–րդ մակարդակների (KS4) միջև՝ անգլերեն և մաթեմատիկա առարկաների քննություններից.
- ✓ Աշակերտների տոկոսը, ովքեր հանձնել են 5 և ավելի ՄԿԸՎ քննություն և ձեռք են բերել A* – C որակավորում.
- ✓ Աշակերտների տոկոսը, ովքեր մասնակցել են «Ա–մակարդակի քննություններին» (A–levels – KS5) և ստացել 3 ու ավելի A– գնահատական (A–ից E սանդղակով).
- ✓ «Ա–մակարդակի» քննություններից (A–levels–KS5) յուրաքանչյուր սովորողի միջին միավորը.
- ✓ Մեկ աշակերտի հաշվով կատարվող ծախսերը:

Վարկանիշավորման արդյունքում կատարվում է դպրոցների գործունեության վերլուծություն: Վերլուծման արդյունքում ստացվում են նաև շատ կարևոր տեղեկություններ. այդ թվում սոցիալապես անապահով ընտանիքների և խնամքի տակ գտնվող երեխաների առաջադիմության դինամիկան, սովորողների կողմից նախընտրելի առարկաների ցանկը և այլն: Օրինակ՝ վերջին վարկանիշավորման արդյունքում պարզվել է, որ 125 դպրոցներում բարձր դասարանների ոչ մի սովորող չի ընտրել պատմություն կամ աշխարհագրություն առարկայի քննությունը, իսկ 77 դպրոցներում ոչ մի աշակերտ չի ընտրել օտար լեզվի քննությունը: Վերլուծության ժամանակ համադրվում է նաև աշակերտների առաջադիմությունը տարրական և միջին դպրոցում: Օրինակ՝ վերջին վարկանիշավորման արդյունքում պարզվել է, որ աշակերտների գրեթե կեսը՝ 45.6%–ը, ովքեր տարրական դպրոցում դրսևորել են բավարար առաջադիմություն, չեն կարողացել հանձնել ՄԿԸՎ քննությունները հինգ կամ ավելի առարկաներից, ներառյալ անգլերեն լեզվից և մաթեմատիկայից:

Վարկանիշավորման աղյուսակները նաև ցույց են տալիս դպրոցի մեկ սովորողի միջին ծախսը: Մասնավորապես, վերջին վարկանիշավորման տվյալներով դպրոցները մեկ սովորողի վրա միջինում ծախսում են տարեկան £5712, սակայն կան մոտ 30 դպրոցներ, որոնցում այդ ծախսը կազմում է ավելի քան £10,000:

Ավստրալիա

Հետաքրքրական է Ավստրալիայի վարկանիշավորման մոդելը:

Դպրոցների վարկանիշավորումը Ավստրալիայում իրականացվում է «Ավելի լավ կրթություն Ավստրալիա» (Better Education Australia) կազմակերպության կողմից:

Վարկանիշավորման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում սպառողներին ինքնուրույն ընտրել դպրոցը՝ ելնելով իրենց նախասիրությունից և հետաքրքրող ցուցանիշից, քանի որ Ավստրալիայում դպրոցների տիպերը խիստ տարբեր են և դպրոցներն իրավունք ունեն կատարել սովորողների ընտրություն:

Ավստրալիայում դպրոցների վարկանիշավորման մոդելը բազմատարր է, սակայն ինչպես և այլ երկրներում, հենված է սովորողների ակադեմիական արդյունքների վրա: Այստեղ օգտագործվում են 12 –ից 14 ցուցանիշներ, որոնք հիմնականում որոշվում են քննությունների և

թեստերի արդյունքներով: Այդ ցուցանիշների համար հիմք են հանդիսանում ինչպես միջնակարգ կրթության ավարտական քննությունների, բուհական ընդունելության թեստերի արդյունքները, այնպես էլ բուհեր ընդունվածների թիվը: Կարևոր ցուցանիշներ են նաև որոշակի առարկայի դասավանդման մեջ դպրոցի հաջողությունը և անգլերեն ու մաթեմատիկա առարկաներից «Ազգային գնահատման ծրագիր» (NAPLAN – National Assessment Program – Literacy and Numeracy) արդյունքները: Այդ ծրագրի շրջանակներում, 2008 թվականից, 3–րդ, 5–րդ, 7–րդ և 9–րդ դասարանների սովորողները հանձնում են «գրագիտության» և «թվաբանության» միասնական թեստեր, որոնք ստուգում են սովորողների գրելու, կարդալու, հաղորդակցվելու և հաշվելու հմտությունները:

Բացի վարկանիշավորումից, Ավստրալիայում իրականացվում է նաև «Համայնքի սոցիալ–կրթական առավելության ինդեքսի» (ICSEA– Index of Community Socio–Educational Advantage) հաշվարկ և ելնելով համայնքի սոցիալական բնութագրից՝ դպրոցները բաժանվում են խմբերի: Ինդեքսի հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

- ✓ Դպրոցում սովորողների թիվը.
- ✓ Սովորողների ծնողների զբաղվածությունը և կրթությունը.
- ✓ Սովորողի բնակության վայրի սոցիալ–տնտեսական բնութագրերը.
- ✓ Դպրոցի գտնվելու վայրը (մայրաքաղաք, տարածաշրջան կամ երկրի հեռավոր շրջան).
- ✓ Դպրոցում այն սովորողների տոկոսը, որոնց համար անգլերեն լեզուն մայրենի լեզու չէ.
- ✓ Դպրոցում բնիկ սովորողների տոկոսը:

Մալազիա

Մալազիայում վարկանիշավորման նպատակն է խրախուսել հանրության ներգրավվածությունը հանրակթության շուրջ քննարկումներում, ապահովել ծնողների իրազեկվածությունը դպրոցների գործունեության մասին և խթանել դպրոցների զարգացումը:

Մալազիայում դպրոցների վարկանիշավորում առաջին անգամ իրականացվել է 2008 թվականին՝ 10000 տարրական և միջնակարգ դպրոցների շրջանում: Այն հիմնված է դպրոցների կրթական արդյունքների վրա՝ այդ թվում «Որակյալ կրթության չափորոշիչներ» քննության (Standard for Quality Education in Malaysia) միավորների վրա:

Դպրոցները վարկանիշավորվելու համար պետք է ապահովեն հետևյալ իրավասության չափանիշները.

- ✓ Դպրոցը պետք է ապահովի վարկանիշավորման իր ցուցանիշային միավորների բարելավում նախորդ տարվա նկատմամբ (Այս չափանիշը հնարավորություն է ընձեռում պարգևատրել կամ խրախուսել առաջադեմ ուսուցիչներին և տնօրեններին:
- ✓ Դպրոցն իր տարեկան հաշվետվության գնահատման արդյունքում պետք է հավաքի 90–ից բարձր միավոր.
- ✓ Դպրոցի տարեկան ֆինանսական աուդիտի եզրակացությունը պետք է լինի դրական.
- ✓ Դպրոցը տվյալ տարում կարգապահական տույժերի պետք է ենթարկված չլինի.
- ✓ Տարրական դպրոցների դեպքում՝ սովորողների կողմից ձեռք բերած գրագիտության և մաթեմատիկական հմտությունները պետք է համապատասխանեն պետա-

կան չափորոշիչներով սահմանված հմտություններին:

Մալազիայում վարկանիշավորման արդյունքում հրապարակվում են միայն բարձր արդյունքներ ցուցաբերող դպրոցները (ԲԱՑԴ – High Performing Schools (HPS)): Դրանք այն դպրոցներն են, որոնք ապահովում են սովորողների բարձր առաջադիմությունը բոլոր առարկաներից, ունեն շարունակական բարելավման ձևավորված ավանդույթներ և հաջողությամբ մրցակցում են միջազգային ասպարեզում:

ԲԱՑԴ կարգավիճակ ստանալու համար հաշվի է առնվում սովորողների ուսումնական ձեռքբերումները, դպրոցի շրջանավարտների հետագա հաջողությունները, միջազգային ճանաչումը և միջազգային ցանցերում ընդգրկվածությունը:

ԲԱՑԴ կարգավիճակ ստանալու համար օգտագործվում են հետևյալ չափորոշիչները.

- ✓ *Գերազանց առաջադիմություն.* դպրոցից քննությունների մասնակիցների 80%–ը գերազանցել են թեստային միավորի միջինը.
- ✓ *Տարբեր բնագավառներում հաջողության հասած շրջանավարտներ.* դպրոցի շրջանավարտներն իրենց կյանքում հասել են նկատելի հաջողության (պետական բարձր պաշտոնյաներ, քաղաքական և հասարակական գործիչներ, գիտության, կրթության, մշակույթի, արվեստի, սպորտի և այլ ոլորտների ականավոր գործիչներ և այլն).
- ✓ *Ազգային և միջազգային մրցանակներ.* դպրոցի սովորողները մասնակցել են և ցուցաբերել բարձր արդյունքներ ազգային և միջազգային մրցույթներում, օլիմպիադաներում.
- ✓ *Համագործակցություն բուհերի հետ.* տարբեր կրթական ծրագրերով դպրոցից ԲՈՒՀ–եր սովորողները փոխանցում են իրենց ակադեմիական կրեդիտները, դպրոցն իրականացնում է ԲՈՒՀ–եր հետ համատեղ հետազոտական ծրագրեր, դպրոցը և որևէ ԲՈՒՀ(եր) համատեղ են օգտագործում ուսումնական ռեսուրսները և այլն:
- ✓ *Ամուր ցանցեր/կապեր.* դպրոցն ընդգրկված է ազգային և միջազգային դպրոցական ցանցերում, համագործակցում է երկրի և արտասահմանյան հաստատությունների հետ, իրականացնում է իր աշխատակազմի, սովորողների և ուսուցիչների փոխանակում, համագործակցում է համայնքային, պետական կառույցների ու մասնավոր կազմակերպությունների հետ:
- ✓ *Միջազգային և ազգային ստուգատեսերում բարձր արդյունք.* դպրոցի արդյունքները միջազգային (PISA, TIMSS, և այլ) և ազգային ստուգատեսերում բարձր են միջին միավորներից:

Նշված ցուցանիշներն ուղղված են դպրոցների արդյունքների բարելավմանը և ստեղծում են կադրային ռեսուրսների զարգացման ավելի մեծ հնարավորություններ և բարձր առաջադիմություն ունեցող սովորողների համար հետագա ուսման մեջ արագ առաջխաղացման հնարավորություններ:

Մալազիայում վարկանիշավորման արդյունքում բարձր տեղեր զբաղեցրած դպրոցների ուսուցիչները և տնօրենները ստանում են ֆինանսական և ոչ ֆինանսական պարգևներ ու խրախուսում՝ պաշտոնի բարձրացում, վկայականների շնորհում և այլն: Բացի այդ, երեք տարի

անընդմեջ բարձր դիրքեր զբաղեցրած դպրոցներն ընդգրկվում են նոր կրթական ծրագրերում:

Վարկանիշավորման արդյունքում ցածր տեղեր զբաղեցրած դպրոցների ուսուցիչների և տնօրենների մոտ 10 տոկոսի համար կազմակերպվում են վերապատրաստումներ:

Մի քանի տարի շարունակ վատ արդյունքներ ցուցաբերած դպրոցներին պետությունը կարող է միավորվել այլ դպրոցների հետ:

Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնությունում պետական միասնական քննությունների ներդրման հետ միաժամանակ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, գիտական կառույցներ և ՋԼՄ–ներ սկսել են կազմել դպրոցների վարկանիշավորման ցանկեր: Ռուսաստանում գոյություն ունեն ամենատարբեր ռեյթինգներ. Մոսկվայի ավագ դպրոցների, մեծ քաղաքների մասնավոր դպրոցների, տարբեր նահանգների հիմնական դպրոցների, մասնագիտական թեքումով դպրոցների և այլն: Բացի այդ, մի քանի հայտնի հանրապետական և ռեգիոնալ գիտահետազոտական ինստիտուտներ զբաղվում են դպրոցների ներքին, արտաքին գործունեության գնահատման, վարկանիշավորման հիմնախնդիրներով և մշակում են անհրաժեշտ գործիքակազմեր: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի ու Ամերիկայի, որտեղ վարկանիշավորման գործիքակազմի մշակմանն ուղղված հետազոտությունները հիմնվում են դպրոցում կրթական գործունեության լուրջ վերլուծական աշխատանքի, տարիների ընթացքում կուտակած փորձի, փորձարկված մեթոդաբանության և գործիքակազմի վրա, Ռուսաստանում այսօր կարելի է խոսել միայն վարկանիշային հետազոտությունների մշակույթի ձևավորման մասին:

Առանձին ռեյթինգներ են պատվիրում ինքնավար շրջանները, քաղաքները, փոքր և մեծ բնակավայրերը, իսկ արդյունքներն օգտագործում են ամենատարբեր նպատակների համար՝ դպրոցներին դրամաշնորհներ տրամադրելու, լավագույն դպրոցների մրցույթ անցկացնելու, ուսումնական ծրագրերը վերանայելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար և այլն: Սակայն, բոլոր ռեյթինգների ցուցանիշներում պարտադիր ներառված են պետական միասնական քննությունների արդյունքները (ԵԳԷ), հանրապետական, ռեգիոնալ ու քաղաքային դպրոցական օլիմպիադաներում ու միջազգային տարբեր մրցույթներում սովորողների արդյունքները: Հանդիպում են ռեյթինգներ, որտեղ ցուցանիշների թիվը հասնում է մինչև 25–ի:

Schoolup.ru – Ռուսաստանի Դաշնությունում դպրոցների վարկանիշներին նվիրված կայք է, որը նախատեսված է ծնողների, ուսուցիչների և սովորողների համար: Այն հնարավորություն է տալիս գտնել ցանկացած դպրոց և քվեարկել այդ դպրոցի համար, թողնել կարծիք, վերբեռնել դպրոցի լուսանկարները: Ըստ այդ քվեարկության էլ դպրոցները հավաքում են ձայներ: Նման հնարավորություն է տալիս նաև Рейтинг школ России կայքը:

Ռուսաստանի տարբեր շրջաններ օգտագործում են դպրոցների վարկանիշավորման տարբեր մեթոդաբանություն՝ մեկ միասնական հիմքի վրա. բոլոր վարկանիշավորման սանդղակները կառուցվում են միասնական քննությունների արդյունքների վրա: Որոշ տեղերում օգտագործվում են նաև օլիմպիադաներում մասնակցած/հաղթած սովորողների թիվը:

Օրինակ. Մոսկվա քաղաքի ավագ դպրոցների վարկանիշավորում իրականացնելիս դպրոցներին շնորհվել է՝

1 միավոր – յուրաքանչյուր այն սովորողի համար, ով 3 առարկայից միասնական քննությունների ժամանակ հավաքել է 220 միավոր,

1 միավոր – համառուսաստանյան և Մոսկվայի քաղաքային օլիմպիադաների շրջանային փուլում յուրաքանչյուր մասնակցի համար,

3 միավոր – համառուսաստանյան և Մոսկվայի քաղաքային օլիմպիադաների շրջանային փուլում յուրաքանչյուր մրցանակակրի համար,

5 միավոր – համառուսաստանյան օլիմպիադայում յուրաքանչյուր մասնակցի համար,

10 միավոր – համառուսաստանյան օլիմպիադայում յուրաքանչյուր մրցանակակրի համար:

Դպրոցների հավասար միավորներ հավաքելու դեպքում հաշվի են առնվում 9–րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները:

Հոդվածի ներկայացման պարտեթիվը՝ 18. 01.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը:
2. «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման» կարգ:
3. «Հանրակրթությունը Հայաստանում 2010–2011 ուսումնական տարում» վիճագրական տեղեկագիր, ՀՀ ԿԳՆ, ԿՏԱԿ, Երևան 2011:
4. «Identifying Top–Performing High Schools; Analytical Methodology; Developed for America's Best High Schools Project with U.S. News and World Report»; December 2009.
5. Mary Ann Lachat, Data–Driven High School Reform The Breaking Ranks. Model.
6. Cromey, A. (2000). Using student assessment data: What can we learn from schools? Policy Issues, 6. Oak Brook, IL: North Central Regional Educational Laboratory.
7. DiMartino, J. (1999). The congruence of Breaking Ranks with emerging frameworks of high school reform. Providence, RI: Northeast and Islands Regional Educational Laboratoryat Brown University.
8. Berlin Principles on Ranking of Higher Education Institutions, http://www.che.de/downloads/Berlin_Principles_IREG_534.pdf
9. Salmi, Jamil, If Ranking is the Disease, Is Benchmarking the Cure? http://www.unesco.org/pv_obj_cache/pv_obj_id_6F5397FECED78FBA156FA860184A274873C21A00/filename/J.Salmi.pdf
10. High School Rankings, UK
11. http://www.top–schools.co.ukHow does Better Education Australia rank schools? http://betteredu-cation.com.au
12. Методика рейтингования школ повышенного уровня. © РИА Новости ©Межрегиональная ассоциация мониторинга и статистики образования, Москва,2012.
13. Рейтинг лучших московских школ 2011–2012. http://www.schoolotzyv.ru/luchshie–shkoly–moskvy
14. Рейтинг российских школ, лучшие школы, лучшие математические и гуманитарные школы. http://www.ucheba.ru/school–rating/
15. Лучшим школам дали гранты. http://www.rg.ru/2011/11/15/shkoli.html
16. Рейтинг школ повышенного уровня восьми регионов России. http://ria.ru/ratings_multimedia/20120214/562296565.html

ОБЩАЯ СИСТЕМА СОЗДАНИЯ РЕЙТИНГОВ И МЕТОДИКА РЕЙТИНГОВАНИЯ ДЛЯ ШКОЛ АРМЕНИИ

АРУТЮНЯН КАРИНЕ

Заместитель министра образования и науки РА,
кандидат физических наук

ДАВТЯН НУНЕ

"Центр образовательных программ"
Руководитель проектов дошкольного
образования и высшей школы

В статье представлены основные принципы построения популярных во многих странах мира рейтингов школ, виды рейтингов школ, задачи рейтингования, основные этапы разработки и реализации рейтингования образовательных учреждений, а также цели и задачи рейтингования школ Армении. Показано, как для нынешнего этапа развития среднего образования показатели рейтингования могут служить в качестве «инструмента» для развития школы.

Дата представления статьи: 18.01.2013 г.

ON SOME PROBLEMS OF GENERAL RATING SYSTEM CREATION AND INTRODUCTION IN THE RA SCHOOLS

KARINE HARUTYUNYAN

Deputy Minister of Education and Science of RA
PhD in Physical Sciences

NUNE DAVTYAN

"Center for Educational Programs "PIU"
Head of Preschool Education and High School
Subcomponents

The article represents the problems of development and implementation of educational institution ranking, which is very popular in many countries around the world, as well as the basis of the school rating principles, the types of school rating,the tasks of rating, the main stages of the development and implementation of rating educational institutions. The aims and objectives of rating schools in the Republic Armenia are represented in the article.

Article submission date 18.01.2013